

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

# ՄՇԿԿ

ՀԻՆԳԵԱՐԻ ՕԳՈՍՏՈՍԻ ԱՐՄԵՆԻԱ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ. Մեր հասցեն. Тифлис, Редакция «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տէլ. Գ. Ֆ. Ն. № 258.

Պատարարութիւնը բաց է առաւելումն 10—8 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով. Յայտարարութիւնների համար վճարում են հետաքրքիր տողատեղին 10 կոպեկ. Տէլ. Գ. Ֆ. Ն. № 258.

### ԲՈՎԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Գիւղը պէտք է կարգայ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մայրենի լեզուի դասաւանդութիւնը. Նամակ վերին-Ազուլիսից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կ. Պօլսի լրագրներից. Նամակ Գերմանիայից. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱՊԵՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Խառնալուծ.

### ԳԻՒՂԸ ՊԵՏԻ Ե ԿԱՐԳԱՅ

Գիւղը պէտք է կարգայ և այդ բանը արդիւններու համար անհրաժեշտ է, որ մեր ինտելիգենցիան, մեր գաւառական գործողները առանձին ուշադրութիւն դարձնեն ընթացակարգութեան տարածման վրա: Գիւղը պէտք է կարգայ, եթէ մենք յանկանում ենք, որ գիտութեան, գեղարուեստի և գրականութեան արդիւնները սեփականութիւն դառնան ժողովրդական մասաների համար:

Գիւղը պէտք է կարգայ, եթէ մենք կամենում ենք, որ նա կամայ-կամայ փոխէ իր անտեսական կարգերը, գիտակցութիւն մտնէ իր գիւղական-հասարակական կեանքին մէջ, ընտելանայ աւելի խելացի և կատարելագործանութիւնների իր ընկերական յարաբերութիւնների մէջ: Երկու տարի առաջ նշանաւոր ռուս հրատարակիչ Պավլենկով թողեց կտակ, որով նա կարգադրում էր նպաստ տալ 2000 գիւղական գրագրանքի, յատկացնելով իւրաքանչիւրին մօտ յիսուն ռուբլ. գին: Եւ արդէն բացված են մի քանի հարիւր գրագրանքներ, իսկ միւսների բացումը կարված է մի քանի ձևականութիւնների վերջացնելուց:

Սպասել բարեբաղձների և կտակողների մեր երկրի համար—դա նշանակում է երկու ժամանակով յետաձգել գործը: Գաւառական գործողները պէտք է այս գործում աւելի յոյս դնեն իրանց ոյժերի և միջոցների վրա և կօպէկնեն ու ռուբլիներ ժողովրդով կազմեն գումարներ, որոնցով կարելի լինէր փոքրիկ գրագրանքներ կազմել գիւղերում:

Երբ կաշանջը պէտք է համարվի մեր ներքին կեանքի ամենակարեւոր պահանջը մէկը: Եւ կարելի է համարձակ ասել, որ գրքի մեծ պահանջը զբաղող գիւղ-

ղերը անկասկած շատ շուտով կը վայելեն մեծամեծ օգուտներ թէ անտեսական և թէ իրանց հասարակական-բարոյական կեանքի ասպարէզներում:

### ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

#### ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ ԴԱՍԱԻԱՆՈՒԹԻՒՆԸ

Ղրիմի եւ Նոր-Նախիչևանի դպրոցների սաների ձեռքը պէտք է տանք տեղական բարբառով կազմած այբբենարան, այսինքն ուսման առաջին տարում աշակերտին պէտք է սովորեցնենք գիցուք՝ ազար, մալա, փենչերէ, ստու, բալմաբի, չուբի եւ այլն, իսկ երկրորդ տարում՝ բակ, փողոց, պատուհան, սեղան, ոտնաման, գուլպա եւ այլն, այսինքն երկրորդ տարվանից մենք պէտք է ոչնչացնենք աշակերտի առաջին տարում ձեռք բերած բառերի պաշարը եւ նոյն սկսնք գրական լեզուով (Մշակ № 143). Այս է հետեւեցնում պ. Արարատեանցի իմ յօդուածից (Մշակ № 115) եւ որանով մի անձնութիւն է թոյլ տալիս իրան. նա ասում է, թէ աշակերտին իմ առաջարկածով պէտք է սովորեցնենք ազար, մալա եւ այլն եւ ապա երկրորդ տարվանից ոչնչացնելով աշակերտի առաջին տարում հաւաքած բառերի պաշարը՝ նոյն բառերը սովորեցնենք գրական լեզուով: Արդե՞ք պէտք է սովորեցնենք, թէ երեխան արդէն իսկ գիտէ, որ այս ստու է, այն չուբի, խօսք չը կայ, որ գիտէ եւ ուրեմն պարտի աւելացնելը, թէ «...դա ուսուցիչը կը պահանջէ կրկնակի աշխատանք եւ անհամեմատ կը դանդաղեցնէ ուսման արագորոշմանը»—բոլորովին սխալ եզրակացութիւն է:

Կարծես այժմ էլ գործնական մէջ գոյութիւն չունի այդ հակասութիւնը. երեխան ասում է՝ փափի, պապա, մամա, իսկ ուսուցիչը ուղղում նրան՝ բաղ, հայր, մայր. հետաքրքիր է իմանալ, ինչ կը պատահանէ ուսուցիչը աշակերտի հարցին, թէ՛ «հապա փափի, պապա, մամա հայնակ չէ ինչ» ... ինչպէս կը բացատրէ, թէ դա էլ «հայնակ» է, բայց ռուբլի հայնակ... Աւելի ծանր տախտանք չէ միթէ ուսուցիչի եւ աշակերտի համար, երբ գրական լեզուով կազմած դասագիրքը գաւառում ուսումնասիրում են ճիշդ այնպէս, ինչպէս թիմական դպրոցներում գրագրեր, այսինքն քերականական կամ թարգմանական (грамматический метод) եղանակով: Սանին մի սերունդ են տառադրուած,

մի նախադասութիւն, որի յաճախ բոլոր բառերը բացատրութեան են կարօտ եւ կամ թարգմանութեան. բացի այդ նախադասութեան կազմը բոլորովին համաձայն չէ տեղական, ընդի բարբառի (որը իսկապէս մայրենի լեզուն է եւ ոչ թէ գրականը) նախադասութիւնների կազմին: Ղրիմի մանուկը ասում է՝ մա ջրիմին տակէն կը բորբոքայ» (օրհնակը անսկզբ է Ռոմանոսեանի գրքից), իսկ գրական լեզուն նոյնը փոխում է այսպէս՝ «մա բորբոք է ջրի տակից»: Առաջինում ենթակայի եւ ստորոգեալի մէջ կայ 2 պարզաբանող բառ, այն ինչ երկրորդում ենթակային անսկզբապէս հետեւում է ստորոգեալը եւ ապա յաջորդում են պարզող բառերը. բացի դրանից երեխան պէտք է ընտելանայ խորթ վերջաւորութիւններին: Որքան ծանր աշխատանք 8—9—10 տարեկան երեխայի համար, որ նոր է սովորել, կամ դեռ չարեւակում է ուսումնասիրել այբուբենը՝ 40-ից աւելի տառ և հնչիւն (աւելացնենք նաեւ զլիստատները, տպագիրը եւ ձեւագիրը):

Մանկավարժութիւնը պահանջում է ուսուցչից, որ սա աշակերտի ամեն մի կարգացած բառը բացատրէ նրան. երեւակայեցէք ձեզ մի անոթը դասարան՝ 15—20 աշակերտից բաղկացած. դուք, զիցուք, անցաք մի նոր հնչիւն եւ տառ. այդ երկուսը աշակերտի յիշողութեան մէջ ամրացնելու համար դասագիրքը տալիս է ուսումնասիրութեան նիւթ, որը յաջորդ դասին պէտք է կարգան սաները եւ զրենս Գուք բացատրեցիք նրանց ամեն մի բառ, ամեն մի նախադասութիւն, դուք տեսնում էք, որ սաները հասկացան ամեն ինչ: Յաջորդ օրը դուք կսկիծով համոզվում էք, որ երեկվայ ձեր բացատրողական ընթացակարգութեան հէնց «իզը-թողը» չէ մնացել. կորաւ. ձեր աշխատանքը ի դէպ, բացատրողական ընթացակարգութեան մանկավարժական գրականութեան մէջ մօտ ժամանակներումս իր արժանի գնահատութիւնը գրտաւ. նա ճանաչելից աննպատակաբար եւ բոլորովին անպէտք:

Պ. Արարատեանը կարծում է, թէ գաւառաբարբառով ստաց կերտաներին սովորեցնելու համար դժուարութիւններ ծագեցնող այբբենարանների «...ամմեթ» եւ ներկայ մանկավարժական պահանջներին անհամապատասխան կազմած լինելն է, եւ որ եթէ մենք ունենանք մի լուս այբբենարան, որ «... սակիլի այնպիսի հանրամատչելի բառերով և նախադասութիւններով, որոնք ընդհանուր են, գործածական շատ գաւառներում... եւ աստիճանաբար դաս դէպի անձանթը...» ամեն դժուարութիւններ կը վեր-

բանան եւ պէտք չի լինի գաւառաբարբառներով կազմած դասագրքերի:

Բայց ո՞վ կը տայ մեզ մի բառարան, որի բառերը լինեն հանրամատչելի եւ գործածական շատ գաւառներում. կարելի է կազմել այդ տեսակ բառարան եւ այդ բառարանով ստեղծել մի այբբենարան, որի լեզուն լինի «մայրենի» եւ զրմացու, եւ բնաբարբառ, եւ օչականցու համար: Ոչ, սա ուսուցիչա է, որ երէք չի իրազորովի, որովհետեւ բառարանից զատ կայ մի ուրիշ ահալին խորխորատ, որ բաժանում է մեր բարբառները իրարից՝ դա քերականութիւնն է. մէկը ասում է կըլլայ, միւսը՝ կըլի, երրորդը՝ կը լինի. կապ, ասում է, ասում ա, ասէ կը (խոստովանում եմ, եւ ծանօթ չեմ բարբառներին սրանից աւելի): Աւելի շուտ մենք կուրենանք մի ընդհանուր բառարան, բան թէ ընդհանուր քերականութիւն:

Ամենացաւային այն է, որ իմ յարգելի օպպոնենտը չէ դժուարացել մի անգամ տեսնել, եթէ ոչ ուսումնասիրել, պ. Ռոմանոսեանի այբբենարանը. եւ իզուր Գուքէ, եթէ տեսնէր նրան, կը համոզվէր, որ գաւառաբարբառով կազմած դասագիրքը այնքան էլ մեծ հրէշ չէ: Այստեղ եւ կրկնում եմ, որ պ. Ռոմանոսեանի դասագիրքը դեռ կարօտ է որոշ փոփոխութիւնների:

Պ. Արարատեան ասում է, որ եթէ իմ խորհրդին հետեւեն, «... իւրաքանչիւր տեղում մեզ պէտք կը լինի ունենալ անպատճառ տեղացի ուսուցիչ, որպէս զի նա հասկանայ տեղական բարբառը եւ կարողանայ այդ բարբառով այբուբեն աւանդել: Նա կարծում է, թէ բաւականաչափ ուսուցիչներ չեն գտնվի եւ շատերն էլ ջաղջած կը մեռնեն: Եթէ այժմ մենք կարելի ենք համարում փոխադասի ուսուցչին բերել Ղրիմ, պարտի բերած արգելք չէ կարող մեր աչքը վախեցնել: Աւելի լաւ է մի մտքը (ուսուցիչը) կրէ օտար բարբառի ուսումնասիրութեան ծանրութիւնը, քան թէ տանակներով փոքրիկ գիւղերի մայրվին նոյն աշխատանքի բեռնա տակ...»

Ես կրկնում եմ, որ գրական լեզուն ընդհանուր մայրենի լեզու չէ. նա միայն պայտօնական մի լեզու է, որ ապագայում կարող է մայրենի դառնալ մեզ համար. իսկ սա այժմ դարբարացու համար իր բարբառն է մայրենի, զրմացու համար իրը, զգալու համար իրը, եւ այլն. իսկ Բեսարաբիայի հայերը չունեն բարբառ, որովհետեւ, ինչպէս ասում է պ. Արարատեան, նրանք ամբողջապէս թրքախօս են. թող ծիծաղելի չերեւայ սա, բայց ներկայ ման-

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

(Ուղեւորի թողնելի տպագրութիւններ) XXVI  
Ես մինչեւ այժմ ոչինչ չստացի Միքէլ-Անջելոյ մեծ ժամանակակից եւ արտյան Բաֆայէի մասին: Այդ յապաղումը մոռացութեան արդեւք չէ: Այլ կանխամտածած Որ եւ է մեծութիւն ընդհանր եւ իր իսկական չափով տեսնելու համար, նրան իր նմաններից զատելն անհրաժեշտ չէ: Բաֆայէ և Միքէլ-Անջելոյ.—Երկուսն էլ այնքան մեծ են, որ նրանց կողք կողքի դնելը շատ է ճնշող:  
Տարօրինակ ժամանակներ էին XV-րդ դարի վերջերը եւ XVI-ի սկիզբները: Ամբողջ դարեր, որ Միլանն ընտրուել է «հազար տարի՝ առանց պատման» խօսքերով, խառնի, ամուլ վէճերի, դատարկ սքոթստիկայի մէջ ճմուլած միաբն, լեթարգիական ջնից յանկարծ արթնացածի պէս, տեսնելու եւ գիտնելու ծարաւով բռնված, աշխատում է մրանգամից, մի հզօր ջանքով ընդգրկել այն, ինչ նրանից ծածկւած էր այն-պէս ժամանակ: Եւ յոգնած ու տառապած՝ նա լիտ յեւ է նայում, աշխատում է վերարտադրել դասական ժամանակները, որպէս մի մո-

ռացված երազ, որպէս մի քաղցր վերջույ ըբբերում է այն օրերի տպագրութիւնները, երբ երեւակայութեան ազատ թռիչքը ոչնչով խազանված էր, երբ բանականութիւնը գործում էր իր բոլոր գորութեամբ: Այստեղ՝ այն կոյս ժամանակների կոյս ոգու մէջ ներշնչումներ էր փնտրում, ինչպէս գիշերային խաւարում արթնացած մանուկը չրթունքների հպումով փնտրում է մայրական կենսատու ստիւքը:  
Սկզբիցին էր, որ իր սքոթստիկայով իր երկաթէ դոզմայով չորացրել էր սրտերը, քամել նրա կոմանական նիւթը, խեղդել երեւակայութիւնը. այժմ երկու պապեր էին՝ Յուլիոս II եւ Լեոն X, որոնք երես էին դարձնում իրանց նախորդների ընթացքից, խզում էին կապը քաղաքացի եւ քաղաքացի անցելի հետ եւ չէին քաշվում քահանայապետական գահի բարձրութիւնից: Չուրս կանչել հեթանոս միտքն ու գեղարուեստը ժամանակի, մեծ գաղափարներով յղի որ եւ է մեծ էպօլայի ոյժը միշտ անօրինակ մեռած օրօքների է ընդունակ: Յուլիոս II եւ իր յաջորդը՝ Լեոն X կարծես պապեր չէին, այլ երկու աշխարհական իշխաններ, միջնադարեան երկու հարուստ ազնուականներ, կենսապէս, ուրախ, գեղասէր, որոնց պալատները ներկայացնում էին թափառական երգիչների, բանաստեղծների, նկարիչների, քանդակագործների բարձր ապագատարան: Թէ մինչեւ որ աստիճան XVI-րդ դարի սկզբում հեթանոս գեղարուեստն իշ-

խում է՝ այդ երեւում է նրանից, որ երբ Յուլիոս II գաւա Լաօկոսին հոյակաւոր արձանատու լուսնը, հրամայեց Հոմեր բոլոր եկեղեցիներում զանգաւարել: Քրիստոնէական տաճարների կատարներից հնչվող այդ զօղանջները աւետում էր էր մտքի վերածնութիւնը, աւետում էր լոյսը երկարատեւ, մաշվ գիշերից յետոյ:  
Յուլիոս II եւ Լեոն X եւ նրանց հովանաւորած երկու հսկայ արտիստները՝ Անջելո եւ Բաֆայէ, չորս ժամանակակից անուններ են, որոնք էլի մի անգամ ապացուցեցին, որ անհատի դերը պատմութեան մէջ անագին է, որ անհատը իր գործունէութեան, իր մտքի, իր ընտանորութեան զրօշմ է դնում այս կամ այն էպօլայի վրա, բայց փոխադարձապէս ինքը, նոյն անհատը իր ժամանակում երեւան է գալիս որպէս արտաբնական անբարձրութիւն՝ պայմանաւորված հեռուստր եւ մօտաւոր անցելի անթիւ ֆակտորներով: Ժամանակն ու անհատը կազմում են մի ամբողջութիւն եւ նրանց բաժանել իրարից կը նշանակէ ստեղծել մի անյուսելի զիլիւմա: Բայց թողնենք այս, դանտանք բուն ինչըրին:  
Վերածնութիւն ասելով՝ մարդ իսկոյն յիշում է երկու պապերին եւ նրանց ժամանակակից երկու մեծ վարպետներին, որոնք վերջացրին կամ աւելի շուտ պատկերին Դանտեից սկսած մտաւոր եւ գեղարուեստական շարժումը եւ իրանց անունը տուին այդ իրապէս մեծ ժա-

մանակին Անջելո եւ Բաֆայէ գեղարուեստի երկու արեգակներ են, որոնք իրանց փայլի տակ համարեա խեղդել են մնացած բոլոր մեծ վարպետներին: Այդ բանակայութիւնը դեռ չարունակվում է. որ միւղեցում, որ եկեղեցում, որ պայտուռում նրանց մի գործը կայ, յաճախորդներն անպակաս են:  
Սէն-Լուկայի գալլերցում Բաֆայէի մի որմանկարը տեսայ, 5—6 տարեկան մի փոքրիկ երեխայ, ոչ, մի հրեշտակ, եւ դա միայն բաւական է, որ իւրաքանչիւր տուրիտ այն միւղեցին այցելութեան գնայ: Այստեղ կան եւ ուրիշ բազմաթիւ նման գործեր, որոնցից ամեն մէկը կարող էր մի միւղէի զարդ լինել: Տիցիան ունի իր զուլու-գործոց—«պայտու է հարկա տալ կայսեր, թէ ոչ», բայց Բաֆայէի երեխան տէր է այնտեղ, նա մենակ է իշխում, նա մենակ է գրաւում: Այդ նկարի կատարելութիւնը ոչ միայն հիացնում, այլ եւ չիթում, խոռվում է մարդու Մի փոքրիկ ձիւնաթոյր մարին, մանկական մի դէմք, սիրուն, լիքը այտերով, երկու աչքեր, այնքան կենդանի, որոնք նայում են զիտողին շեշտակի, մի սքոթստի ճակատ՝ եզրված սիրուն խոպոպներով, այսպէս է այն երեխան, բայց այս չէ բոլորը. նայում եւ եւ սպասում, թէ ահա նա գուրս կը գայ չըջանակից, ցած կը իջնի, կը վազէ յատակի վրա, կը ժպտայ, կը խօսի եւ ով գիտէ ինչ մի անօրինակ գերբնական բան կասէ: Այդ երեխան մի

կազմը Երուսաղեմի քաղաքացիական կոմիտեի կողմից...

Պ. Արքեպիսկոպոսի պաշտոնավարման համաձայնագրի...

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ ԱՌՈՒԼԻՍԻՑ

Յուլիոսի 31-ին

Վերջին ժամանակներս ազուլեցու դրուժիտները...

Զուգահեռ մենք վիճակագրական տեղեկություններ...

հրաշք է, եւ գեղարուեստը Աստուած: Հուզումն Բաֆայէլի շատ գործերը տեսայ...

Վատիկանի միջոցառում Բաֆայէլի բազմաթիւ որմանկարներից...

կուցումն հիման վրա) բարձրացել է հեղեղի սարերը...

կողմին կանգնած է Դանտէն, գլուխը պսակված, սուր դէմքով...

գործի ֆրանսիական տառը — l'esperance fait vivre et l'attente fait mourir...

Տանակերացի

ՆԱՄԱԿ ԵՄԲԱՅՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, օգոստոսի 6-ին

Վերսի գերեզմանատան մասին «Մշակի» № 162-ում Ալկանտեզ» ստորագրութեամբ այս տեսակ մի նկատողութիւն...

Ես, իբրեւ Վերսի գերեզմանատան մասնատողութիւնը նշանակված կառավարիչ, յայտնում եմ...

Վերսի հանգստարանի կառավարիչ Յովհաննէս Տէր-Պետրոսեան

ՆԵՐՏԻՆ ԿՈՒՐԻՑ

Մեզ հաղորդում են, որ Գանձակի նահանգական պետը...

Թիֆլիսում վերջին օրերս եղանակը մեղցի է: Յուլիոսի վերջին եւ օգոստոսի առաջին օրերը...

«С. П. ВѢД» լրագիրը հաղորդում է Ուրաղեան շրջանում, կասպից ծովի եզերքներում...

Ռուս բժիշկների Պրոբոզովեան ընկերութիւնը վերանորոգել է իր միջնորդութեամբ կառուցումները...

Յուլիոսի 22-ին, մայրաքաղաքի լրագիրը ստեղծվել է այն բոլոր ուսանողները, որոնք ընդունվել են...

Քաղաքային լուսավորչների կառավարչության երկրորդ համաժողովում...

Պետերբուրգի լրագիրները հաղորդում են օգոստոսի 2-ին այդ քաղաքում տեղի ունեցած...

Օտարերկրայ զբոսաշրջների մի խումբի փոխուղևորները...



ւոր Կայսրը միւս Օգոստոսիան Անձանց հետ միասին Թագաւոր Կայսրը բաժակ բարձրացրեց Պրէօրոսէնեան գնդի եւ իրանց տօնը կատարող բոլոր զօրամասերի փառքի եւ բարգաւաճման համար: Յարսիօն-Մելոյի Մեծ պալատում տնդի ունեցաւ նախաճաշ, որին հրաւիրված էին բարձր իշխանաւորները, որոնք ներկայ էին զօրանաւորներն եւ զօրանաւորներն մասնակցող օֆիցիւրները: Նախաճաշի ժամանակ Թագաւոր Կայսրը բաժակ բարձրացրեց իրանց տօնը կատարող զօրամասերի առողջութեան համար:

7 օգոստոսի

**ՀԱՍԳԱ** Եկան Բօտա, Դէլարէյ եւ Դէվէտ Բօտա յայտնեց, թէ նրանք չուտով հրապարակով կը յայտնեն այն ամենը, ինչ որ ունեն սրտերում:

**ՊԱՐԻՉ** Օգոստոսի 5-ին ժողովված ընդհանուր խորհուրդներին վեցը կարծիք յայտնեցին հոգեւոր ուսումնարանների փակման դէմ եւ քանի որ ղեկավարներն կատարութեան գործողութիւնները Սենատոր Պրնոյի ասելով՝ նախազանգուշեցնելով իրանց իմաստը բոլոր ընդհանուր խորհուրդների կարծիքները:

**Պրնոյի** ղեկավարները պաշտպանում էին ուսումնարանը եւ թող չը տուին ոստիկանութեան գործակալին մտնել նրա մէջ:

**ԵՍՊՈՂԱՄԱ** Հրաբուխի արտափոխումը ոչնչացրեց Տօրիստրինա կղզին: Ամբողջ ազգաբնակչութիւնը, որ բաղկացած էր 150 հոգուց, աղէտի զոհ դարձաւ:

**ԽՈՒՄԱՆՆԵՐ ԱՆՔՍԱՆԻ ԳԱԼԱՆԹԱՐ**  
Հրատարակիչներ՝ ԹԱՅՈՒՆԻ ՏԻՖՐԱՆԵԱՆ  
ԻՍԱՀԱՅ ՄԵԼԻՔ-ԱՂԱՍԱԿԱՆ

### Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

**ԱՆԿՐԿՈՎԱՍԵԱՆ ԵՐԱԹՈՒԿ**  
(Ժամերը նշանակված են Պետերբուրգի հաշուով, փակագծում թիֆլիսի հաշուով)

Արագ գնացք թիֆլիսից—Բագու շարքը մէկ անգամ ուրախ օրերը դուրս է գալիս առաւօտեան 10 ժամ 15 րոպ. (11 ժ. 49 ր.), հասնում է Զագու գիշերվայ 12 ժամ 11 ր. (1 ժ. 9 րոպէին):

Արագ գնացք Բագուից—Թիֆլիս դուրս է գալիս ուրախ օրերը գիշերվայ 12 ժամ 52 րոպէ (1 ժ. 50 ր.), հասնում է թիֆլիս գիշերվայ 2 ժ. 45 ր. (3 ժ. 43 ր.):

Արագ գնացք թիֆլիսից—Բագու ամեն օր դուրս է գալիս առաւօտեան 6 ժ. 45 ր. (7 ժ. 43 ր.), հասնում է Բագու երեկոյեան 5 ժ. 2 ր. (6 ժ.):

Արագ գնացք Բագուից—Թիֆլիս ամեն օր դուրս է գալիս երեկոյեան 10 ժ. 10 ր. (11 ժ. 8 ր.), հասնում է թիֆլիս առաւօտեան 9 ժ. 4 ր. (10 ժ. 2 ր.):

Պատասխան գնացք Բագուից դուրս է գալիս երեկոյեան 9 ժ. 22 ր. (10 ժ. 20 ր.), հասնում է թիֆլիս գիշերվայ 3 ժ. 56 ր. (4 ժ. 54 ր.), դուրս է գալիս թիֆլիսից երեկոյեան 5 ժ. 9 ր. (6 ժ. 7 ր.), հասնում է Բագու առաւօտեան 5 ժ. 40 ր. (6 ժամ 38 րոպէին):

Պարզապար գնացք Բագուից դուրս է գալիս գիշերվայ 2 ժ. 27 ր. (3 ժ. 25 ր.), հասնում է թիֆլիս առաւօտեան 7 ժ. 39 ր. (8 ժ. 37 ր.), դուրս է գալիս թիֆլիսից առաւօտեան 8 ժ. 29 ր. (9 ժ. 27 ր.), հասնում է Բագու երեկոյեան 8 ժ. 30 ր. (9 ժ. 28 ր.):

Պատասխան գնացք Բագուից դուրս է գալիս գիշերվայ 11 ժ. 5 ր. (12 ժ. 3 ր.), հասնում է թիֆլիս գիշերվայ 11 ժ. 34 ր. (12 ժ. 32 ր.), դուրս է գալիս թիֆլիսից գիշերվայ 12 ժ. 36 ր. (1 ժ. 34 ր.), հասնում է Բագու առաւօտեան 6 ժ. 16 ր. (7 ժ. 14 ր.):

Պարզապար գնացք Բագուից դուրս է գալիս առաւօտեան 7 ժ. 5 ր. (8 ժ. 3 ր.), հասնում է թիֆլիս երեկոյեան 6 ժ. 39 ր. (7 ժ. 37 ր.), դուրս է գալիս թիֆլիսից երեկոյեան 7 ժ. 24 ր. (8 ժ. 22 ր.), հասնում է Բագու գիշերվայ 12 ժ. 5 ր. (1 ժ. 3 ր.):

Պատասխան գնացք դուրս է գալիս թիֆլիսից դէպի Կարս երեկոյեան 8 ժ. 30 ր. (9 ժ. 28 ր.), հասնում է Սանահին 1 ժ. 35 ր. (2 ժ. 33 ր.), Դարաքիլիս գիշերվայ 3 ժ. 32 ր. (4 ժ. 30 ր.), Ալէքսանդրօպօլ առաւօտեան 7 ժ. 17 ր. (8 ժ. 15 ր.), Կարս գիշերվայ 11 ժ. 1. (11 ժ. 59):

Պատասխան գնացք Կարսից դուրս է գալիս գիշերվայ 4 ժ. 57 ր. (5 ժ. 55 ր.), հասնում է Ալէքսանդրօպօլ երեկոյեան 8 ժ. 5 ր. (9 ժ. 3 ր.), Դարաքիլիս 11 ժ. 42 ր. (12 ժ. 40 ր.), թիֆլիս առաւօտեան 6 ժ. 20 ր. (7 ժ. 18 ր.):

Իսան գնացք թիֆլիսից դուրս է գալիս գիշերվայ 2 ժ. 15 ր. (3 ժ. 13 ր.), հասնում է Դարաքիլիս 9 ժ. 30 ր. (10 ժ. 28 ր.) Ալէքսանդրօպօլ գիշերվայ 1 ժ. 25 ր. (2 ժ. 23 ր.):

Իսան գնացք Ալէքսանդրօպօլից դուրս է գալիս առաւօտեան 5 ժ. 25 ր. (6 ժ. 23 ր.), հասնում է Դարաքիլիս առաւօտեան 8 ժ. 35 ր. (9 ժ. 33 ր.) եւ թիֆլիս գիշերվայ 3 ժ. 37 ր. (4 ժ. 35 րոպէին):

## ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷՉ

### Ռատուկարան եւ Պանսիօն

#### Ս. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

Տեղափոխվում է Կրասնիկեանի տունը, Հայոց փողոց, եկեղեցու դիմաց: Ընդունելութիւնը կը սկսի օգոստոսի 25-ից: 1—10

### Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Թիֆլիսի քաղաքային դուստն սրանով յայտարարում է, որ նա նշանակել է 1902 թ. օգոստոսի 12-ին, ցերեկվայ ժամի 12-ին, աստիճան փայտի մատակարարութեան մի տարվայ ընթացքում քաղաքային հիմնարկութիւններին, թիֆլիսի տեղական զօրքին եւ կամեղանախ վարչութեան Անուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագրերը Ուպրաւիթի վարչութեան մէջ իւրաքանչիւր օր, մինչեւ ժամի 2-ը, բացի կիրակի եւ տօն օրերից: 1—3

### ԱՄՍԱԿԱՆ 35 ԲՈՒՔԼՈՎ

Չորս մարտը սենեակներ, ջրով խոնանցով եւ նկուղով ՏՐՎՈՒՄ է ՎԱՐՁՈՎ, Օրբէլիանովայ փողոցում, Կարախանովի տանը, № 8: 1—1

### Ա Չ Դ

Առաջիկայ թատրոնական սեզօնին Բագուում ներկայացնելու համար

- Թ Ա Ր Գ Մ Ա Ն Վ Ա Մ Ե Ն**
- 1) «Перчатки», 2) «Потемки души», 3) «Борцы», 4) «Бой бабочек», 5) «Миражи», 6) «Белая невольница», 7) «Лишенный прав», 8) «Таланты и поклонники», 9) «Гость», 10) «Анна де Кервильер».

**Թ Ա Ր Գ Մ Ա Ն Վ Ո Ւ Մ Ե Ն**

- 1) «Бѣшенныя деньги», 2) «Бѣдность не порокъ», 3) «Дѣти Ванюшина».
- Ընդունվում են ինքնուրույն եւ թարգմանված պիէսաներ Պայմանների մասին դիմել՝  
Ваку; Персееву Давтянцу. 1—6

### ԱՐՄԵՆԱՍԿԻ ՀԱՅՈՑ ՄԻԴԱՍԵԱՆ ՈՒՍՈՒՄ-ՆԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

### ՀԱՐԿԱՒՈՐ Է ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ

Հայոց լեզուի եւ երգեցողութեան համար, շաբաթական 18 շաբաթ, որը նաեւ պարտաւորութիւն կունենայ մասնակցել պատարագի երգեցողութեանը (զարուժիչութեան սակ առանց խմբի): Ուժեղ 400 րուբլի:

Դիմել՝ Արմանէ, Կար. գ. Սեպուհեան  
Գ. Գ. Ալեյանի. 3—5

### ԿՈՂՐ ԳԻՒԴԻ ՀԱՄԱՐ

**ՀԱՐԿԱՒՈՐ Է ՀԱՅ ԲԺԻՅԿ**  
Պայմանների մասին դիմել Արշակ Շահնազարեանին Թիֆլիս, Մոսկովսկե նոմեր, № 24. 2—3

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Շուշի քաղաքի Սեղիցոց ա. Աստուածածին եկեղեցու համար հարկաւոր է ընտրել մի քանիսնայցու, որը կունենայ մտաւորապէս 200 ծուխ եւ կը ստանայ լրիւ բաժին Բանաստեղծութեան պէտք է ունենայ որ եւ է թեմական զարգի կամ էջմիածնի ճանապարհի աւարտման վկայական եւ կամ բարձրագոյն կրթութիւն ծանկացողներին խնդրում եմ չուտով ուղարկել ինձ իրանց վկայագրերը եւ համաձայնութեան թուղթ ծրական ժողովի ընտրութեան ներկայացնելու:

Իմ հասցէն՝ Մուսա, կտորու Մեգրինսկոյ քերքի, Ապոպ Սեփուրյան. 2—5

## Ստացված են Անգլիական

### ԻՆԿՈՒԲԱՏՕՐՆԵՐ

**Ք. Wallin et Co.**  
Մեքենաներ արհեստական կերպով ձուրից ձուտ հանելու համար: Անհրաժեշտ է ամեն մի գիւղատնտեսի եւ թոնապահի համար: Տեղափոխութիւնները եւ գները հարգովում են ըստ պահանջման:

Գլխաւոր ներկայացուցիչ՝ Կովկասի համար՝  
Исаакъ Мирза-Аваковъ. БАКУ. 4—6

Պատե ունեմ յայտնելու պ. պ. վաճառականներին, որոնք կը կամենային գործ ՎԱՐՇԱՎԱՅ Ի ԵՏՈ, որ եւ վաղուց արդէն վերադարձված լինելով Վարշավայանս եւ ամուսն եւ կատարում եմ ամենայն տեսակ

## ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՅԱՆՉՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Եւ իմ բազմամեայ հմտութեամբ առեւտրական ապարհզում օգտաւէտ կարող եմ լինել զիմող վաճառականներին, որոնք խնդրում եմ դիմել ինձ հետեւեալ հասցէով:  
ВАРШАВА, Медовая 17, кв. 33. Минасу Яргулову. (Կ. 5.) 5—10

## ЛЪСОПИЛЬНЫЙ ЗАВОДЪ

### Аршалуисъ, бывший Ананова,

Михайловскій просп., № 68, въ Тифлисѣ.

ПРОДАЖА сухихъ лѣсныхъ материаловъ разныхъ породъ: сосновыхъ, еловыхъ, карагачевыхъ, липовыхъ, ольховыхъ, кленовыхъ, чинаровыхъ, орѣховыхъ, дубовыхъ и ясеневыхъ досокъ, балоковъ и реекъ, также багладки и барезовыхъ дручки. Принимаются заказы по умѣреннымъ цѣнамъ. (Կ. 5.) 5—10

## ՎԱՐՇԱՎԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

### ՅԱՐ. ՂԱՐԱԳԵՕՉԵԱՆԻ

(XI-րդ տարին իր գոյութեան)

Ընդունվում են աշակերտներ գիշերթիֆ, ցերեկոթիֆ (полупансионеръ) եւ երթիկ բոլոր պետական միջնակարգ դպրոցները մտնելու համար: Վարժարանում աւանդվում են ընդհանուր կրթական առարկաներից՝ նաեւ կրօն-բարոյախօսութիւն, հայոց լեզուներէն ու գերմանական լեզուներ հմուտ ուսուցչութիւններին եւ ուսուցիչների ղեկավարութեամբ թէ գործնական եւ թէ տեսական կերպով: Վարժարանում այս տարվանից կընդունուին նաեւ իբրեւ գիշերթիֆներ՝ կրթութեամբ հանդերձ (съ репетиціей) այնպիսի դասաւարակներ, որոնք ուսանում են թիֆլիսի կառավարական բոլոր դպրոցներում: Յատկապէս պատրաստվում են աշակերտներ թիֆլիսի նորարաց կայսերական գեղարուեստական դպրոցում: Ծրագրի համապատասխան: Զրիւթարժ քաւոր աշակերտներ ընդունվում են բարձր կրթութեանը ցուցմամբ: 2—6

Վարժարանի կառավարիչ՝ Յ. Ղարաբեգյան



**ГРАММОФОНЪ МОНАРХЪ**

ГЛАВНОЕ КАВКАЗСКОЕ АГЕНТСТВО ОБЩЕСТВА ГРАММОФОНЪ РОССИИ

(Тифлисъ, Головинскій проспектъ, домъ Абимъ)

Предлагаетъ почтеннѣйшей публикѣ Граммофоны, самыя усовершенствованныя, по шевленному цѣнамъ, а также безшумныя пластинки на нихъ, исполненныя на ГРУЗИНСКОМЪ, АРМЯНСКОМЪ и ТАТАРСКОМЪ языкахъ.

Кромѣ означенныхъ пластинокъ Главное Кавказское Агентство Общества Граммофоновъ России имѣетъ въ продажѣ громадный выборъ неподражаемыхъ безшумныхъ пластинокъ, полненныхъ самыя лучшима, самыя знаменитыя артистами и артистками Русской Императорской оперы. Московскихъ и Петербургскихъ театровъ, съ которыми интересно познакомиться въ предѣлахъ отдаленной Сибири, Китая, Монголии, Манчжуріи, Тибета, Персіи, Индіи, Афганістана, Белуѣжистана и другихъ государствъ, и которая, такимъ образомъ, не имѣетъ возможности лично слышать восхитительное пѣніе и музыку артистовъ.

ИЗЪ ИСПОЛНИТЕЛЕЙ Агентство особенно рекомендуетъ слѣдующихъ артистовъ: Ф. ШАЛЯПИНА, Д. Южина, Д. Собинова, Н. Фигнеръ, М. Михайлову, Л. Брагину, Р. Беренсонъ, А. Давыдова, Г. Морскаго, Н. Ростовскаго, И. Никитина, Н. Шевелева, К. Серебрякова, Бухтоярова, Н. Сѣверскаго, г-жу Медоу Мей Фигнеръ, М. Вольфъ-Израэля, А. Цабелъ, Гопшъ, О. Больша, С. Морозова, Знаменитую исполнительницу цыганскихъ романсовъ А. Бачеву, Р. Раисову, Н. Тамара, А. Сивачева, дуэтистовъ Романченко, ПЕТРА ЕМЕЛЬЯНОВЪ НЕВСКАГО.

## ТРЕБУЙТЕ КАТАЛОГИ

ГЛАВНОЕ КАВКАЗСКОЕ АГЕНТСТВО ОБЩЕСТВА ГРАММОФОНЪ ВЪ РОССИИ 2—10

## Ֆինանսների միևնույն թողություններ

### ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Բա Կու, Բրաչեսնայ, Դոմ Երթ-Օվանեսով)

Կուրսերի նպատակն է սույ ունիղիներին մասնագիտական—առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշվապահներ: Աւարտողները ստանում են առաւել տարեկան կուրսերում աւանդվում են՝ 1) Առեւտրական թուրաւորութիւն եւ թուրաւորութիւն համրիչի վրա: 2) Հաշվապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առեւտրական եւ բանկային: 3) Առեւտրական թղթակցութիւն: 4) առեւտրական տրեւաւորութիւն: 5) Առեւտրական եւ մուրհակային օրէնքներ: 6) Գեղարուեստութիւն եւ արագագրութիւն (ուղղումն ձեռագրի):

Ընդունելութիւնը՝ սեպտեմբերի 1-ից ամեն օր՝ կուրսերում կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) եւ մանրամասն ծրագիրը—արվում եւ ուղարկվում են ձրիարար Օտարաբազաբայցները դիմում են՝ БАКУ, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову. 12—25